



Թեստ՝ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Բնագիտություն

Ուսուցչի իրավասության հաստատում
Նոյեմբեր, 2019

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Ուշադրությամբ ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, լավ ըմբռնեք առաջադրանքի պահանջը և դրանից հետո սկսեք աշխատանքը: Թեստի վրա աշխատելիս՝ կիրառեք կցված քարտեզները:

Նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ միասին նշեք նաև ոչ ճիշտ պատասխանը, միավոր չեք ստանա:

Թեստի առավելագույն միավորն է 65:

Թեստի վրա աշխատանքի համար տրվում է 5 ժամ:

Ցանկանում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղծագործության կոճակները:



➤ *Հարց ընտրովի պատասխաններով՝ առաջադրանք N° 1-21; 27-34; 42-48.*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի համակարգչային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

➤ *Համապատասխանության որոշում՝ առաջադրանք N° 35-37*

Հրահանգ

Որոշեք առաջադրանքում տրված երկու թվարկացանկի միջև եղած համապատասխանությունը: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Յուրաքանչյուր տառի տակ գրեք համապատասխան թվանշանը: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 1:


➤ *Տեղեկատվության վերլուծություն՝ առաջադրանք N° 22-26; 38-41; 49.*

Հրահանգ

Ուշադիր ծանոթացեք տրված տեղեկատվությանը (լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

Մասնագիտական գիտելիք

1. Նկարը կիրառելով որոշեք, ո՞ր լատինական տառով նշված ոսկորն է հանդիպում ստորին վերջույթում:



- ա) A
- ბ) B
- გ) C
- დ) D

2. Մարդու ո՞ր գործունեությունը կարող է էկոհամակարգում առաջացնել կենսաբազմազանության նվազեցում:

I – Անտառահատումը

II – առանց հսկողության որսորդությունը

III – դաշտերի օգտագործումը որպես վարելահող

ա) Միայն I,

ბ) միայն II,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

3. Նկարի վրա ո՞ր լատինական տառով է նշված թունավոր սունկը:



- ա) A
- ծ) B
- գ) C
- դ) D

4. Ո՞ր կենդանիներն են ապրում խմբերով:

I – Մեղուները

II – առյուծները

III – կապիկները

ա) Միայն I և II,

բ) միայն I և III,





գ) միայն II և III,

դ) I, II և III:

5. Թվարկած էկոհամակարգերից ո՞րն է բնական:

- ա) Խաղողի այգին,
- բ) բանջարանոցը,
- գ) անտառը,
- զ) արտը:

6. Առաջնորդվեք նկարով և որոշեք, ո՞ր լատինական տառով նշված միջատներն ունեն նախազգուշացնող գունավորում:



- ա) A և C,
- ბ) B և D,
- გ) A և D,
- დ) B և C:

7. Ո՞ր հիվանդությունն է առաջացնում վիրուսը:

ա) Գրիպ,

ծ) դիֆթերիա,

ց) թոքախտ,

ղ) սև մահ (ժանտախտ):

8. Ո՞ր օրգանիզմներն են բարելավում բնահողի բերրիությունը:

I – Անձրևատրդերը

II – փտման բակտերիաները

III – սնկերը


ա) Միայն I և II,

բ) միայն I և III,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

9. Նկարի վրա պատկերված են տարբեր բույսերի պտուղներ: Ո՞ր լատինական տառով նշված պտղին է բնորոշ ինքնատարածումը:



ա) A

ბ) B

გ) C

დ) D


10. Ֆոտոսինթեզի արդյունքում առաջանում է .

- ա) Ջուր և ածխաթթու գազ,
- բ) թթվածին և ածխաթթու գազ,
- գ) թթվածին և շաքար,
- դ) ածխաթթու գազ և շաքար:

11. Արտադրողները էկոհամակարգում.

- ճ) օգտագործում են պատրաստի օրգանական նյութեր,
- Ն) քայքայում են օրգանական մնացորդներ,
- Ց) լույսի կիրառմամբ առաջացնում են ածխաջրեր,
- Ծ) փոխակերպում են օրգանական նյութերը:

12. Նկարի վրա ո՞ր թվանշանով նշված կենդանին է շնչում միայն թորերի միջոցով:



- ա) Միայն I,
- ბ) միայն II,
- գ) միայն III,
- դ) II և III:


13. Անապատում որոշ կենդանիներ սնունդ հայթայթելու համար բնից գիշերն են դուրս գալիս: Հիմնականում ո՞ր էկոլոգիական գործոններից է պաշտպանվում կենդանին:

- ա) Չափից ավելի լույսից,
- ბ) ջերմաստիճանից,
- գ) ջրի կորստից,
- დ) գիշատիչներից:

14. Թվարկաձևերից ո՞ր գործոնն է բխոտիկ:

- ա) Անձրևը և կարկուտը,
- ձ) օվկիանոսի աղտոտումը նավթով,
- ջ) անտառի վարակազերծումը պեստիցիդներով,
- զ) արոտավայր կրիաիկի (փարոսանի) ներխուժումը:

15. Ո՞ր լամպը (լամպերը) կլինեն լուսավորված K_1 և K_2 միացուցիչները միացնելուց հետո: Հոսանքի աղբյուրի հզորությունը բավական է լամպերի լուսավորման համար:



- ա) Ոչ մի լամպը չի լինի լուսավորված,
- բ) միայն I լամպը,
- գ) միայն II լամպը,
- դ) երկու լամպերն էլ կլինեն լուսավորված:

16. Ունենք չորս կետային լիցք. Լիցք 1, լիցք 2, լիցք 3 և լիցք 4: Հայտնի է , որ լիցք 1 և լիցք 2 ձգում են միմյանց, լիցք 2 և լիցք 3 վանում են միմյանց, լիցք 3 և լիցք 4 ձգում են միմյանց: Թվարկաձևերից ո՞րն է ճիշտ:

ա) Լիցք 1 և լիցք 4 ձգում են միմյանց,

ծ) լիցք 2 և լիցք 3 ձգում են միմյանց,


գ) լիցք 1 և լիցք 3 վանում են միմյանց,

զ) լիցք 2 և լիցք 4 ձգում են միմյանց:

17. Ո՞ր ընդհանուր հատկությունն է բնորոշ հեղուկներին և գազերին:

- ա) Չեն կարող պահպանել սեփական ձևը,
- բ) չեն կարող պահպան սեփական ծավալը,
- գ) պահպանում են սեփական ձևը,
- դ) պահպանում են սեփական ծավալը:

18. Որքա՞նով ավելի է աջ չափանոթում հեղուկի ծավալը ձախի համեմատ (դ. նկ.):



- ա) 4 սմ³-ով,
- ბ) 6 սմ³-ով,
- გ) 8 սմ³-ով,
- დ) 9 սմ³-ով:

19. Տրված պնդումներից ո՞ր է ճիշտ:


- ա) Օդը պարզ նյութ է,
- բ) օդը բարդ նյութ է,
- գ) օդը խառնուրդ է,
- զ) օդը միացություն է:

20. Ինչպե՞ս է կոչվում այն գործընթացը, որի միջոցով տեղի է ունենում նավթի վերամշակում:



- ա) Թորում,
- ծ) գտում,
- գ) սուբլիմացիա,
- զ) կոնդենսացում:

21. Բաժակում տեղադրեցին ձյուն, դրա մեջ իջեցրին ջերմաչափ և սկսեցին բաժակը տաքացնել:Յուրաքանչյուր րոպեն մեկ գրանցում էին ջերմաչափի ցուցանիշը:Ստացված արդյունքների հիման վրա կառուցեցին ջերմաստիճանի ժամանակից կախվածության գրաֆիկը: Գրաֆիկի համաձայն, որքա՞ն ժամանակ կպահանջվի ձյան լրիվությամբ հալվելուց հետո ստացված ջրի եռման համար:




- ա) 6 րոպե,
- բ) 8 րոպե,
- գ) 10 րոպե,
- դ) 18 րոպե:

22. (1 մ.) Տրվածներից ո՞րն է մաքուր նյութ և ո՞րը նյութերի խառնուրդ: Աղյուսակի համապատասխան վանդակում դրեք X նշան.



	1. Գրանիտ	2. Սոդա	3. Սպիրտ	4. Հանքային ջուր
I. Նյութերի խառնուրդ				
II. Մաքուր նյութ				

23. (1 մ.)Նկարի վրա լատինական տառերով նշված են թթենու շերամի կենսական ցիկլի փուլերը:Ուստասխանների թերթիկի վրա տրված աղյուսկում ճիշտ հաջորդականությամբ գրանցեք ցիկլի փուլերի համապատասխան լատինական տառերը:(Ցիկլի հաշվարկը սկսեք C – ից):




I	II	III	IV
C			

24. (1 մ.)Նկարի վրա տրված տեսակների կիրառմամբ կազմեք հինգ աստիճանից կազմված սննդային շղթա: Օրգանիզմների նշված լատինական տառերը գրանցեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակի համապատասխան վանդակներում:



25. (2 մ.) Առաջնորդվեք նկարով և պատասխանեք հարցերին.



25.1. (1 մ.) Ո՞ր լատինական տառով նշված մասում է արյունը հարստանում թթվածնով :

25.2. (1 մ.) Ո՞ր լատինական տառով նշված մասում է օդը տաքանում, խոնավանում և մաքրվում փոշու մասնիկներից:

26. (2 մ.) Վերլուծեք նկարը և պատասխանեք հարցերին.

I



II



26.1. (1 մ.) Ի՞նչ ընդհանուր հատկանիշով են մեկ կարգաբանական խմբի մեջ միավորում նկարի վրա պատկերված բոլոր

կենդանիներին:

26.2. (1 մ.) Ո՞ր հատկանիշով են շարքերում խմբավորված նկարի վրա պատկերված օրգանիզմները:

27. Ո՞ր աշխարհագրական օբյեկտն է լեռնանցք:

ա) Գեղան,

ბ) Գողերձին,

գ) Դալին,

զ) Կլիշին:

28. Թբիլիսիից ի՞նչ ուղղությամբ է գտնվում Ծալկայի ջրամբարը:

ա) Հյուսիս-արևելք,

ծ) Հյուսիս-արևմուտք,

գ) Հարավ-արևելք,

զ) Հարավ-արևմուտք:

29. Ո՞ր գետն է Քուռ գետի աջ վտակը:

ա) Ալազանը,

ბ) Խրամը,

գ) Իորին,

դ) Արագվին:

30. Ո՞ր գետի գետաբերանն է գտնվում ծովի մակարդակից ցածր:

ա) Դանուբ,

բ) Նեղոս,

գ) Վոլգա,

դ) Ամազոն:

31. Ինչի՞ է հավասար տեղանքում երկու բնակավայրերի միջև հեռավորությունը, եթե քարտեզի մասշտաբը 1 : 200 000 է և դրանց միջև հեռավորությունը քարտեզի վրա 4 սմ է:

ա) 80 մ,

ბ) 800 մ,

գ) 8 կմ,

դ) 80 կմ:

32. Ո՞ր օդերևութաբանական սարքն է պատկերված նկարի վրա:



- ա) Անեմոմետր,
- բ) սելսամոզրաֆ,
- գ) բարոմետր,
- դ) հիգրոմետր:

33. Ստորև տրված սարքերից ո՞րն է արեգակնային ժամացույցը:

ա)




բ)




գ)



դ)



34. Ո՞ր թվանշանով է սխեմայի վրա նշված լավան:



- ա) 1
- ბ) 2
- գ) 3
- դ) 4

35. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր չէ).


	I թվարկացանկ		II թվարկացանկ
Տ	Կալիֆորնիայի թ-կ	1	հատում է Գրինվիչի միջօրեականը
Ծ	գ. Ենիսեյ	2	հատում է Խեցգետնի արևադարձը
Ց	ք. Կիտո	3	հատում է Այծեղջյուրի արևադարձը
Պ	կ. Մադագասկար	4	հատում է Հյուսիսային բևեռային շրջանը
Չ	Համագործակցության ծով	5	հատում է Հարավային բևեռային շրջանը
Յ	Ատլասի լեռներ	6	հատում է հասարակածը
		7	հատում է ամսաթվի փոփոխման միջազգային գիծը

36. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր է).

	I թվարկացանկ		II թվարկացանկ
Տ	Մերկուրի	1	Արեգակնային համակարգի մոլորակ, որը չունի արբանյակ
Ծ	Սատուրն	2	Արեգակնային համակարգի մոլորակ, որը 2006 թվականից վերադասակարգված է «Փաճաճ մոլորակների» խմբի մեջ
Ճ	Վեներա	3	Արեգակնային համակարգի մոլորակ, որը մտնում է գազային հսկաների խմբի մեջ
Զ	Պլուտոն		
Ե	Նեպտուն		
Յ	Ուրան		

37. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր չէ).

Քարտեզի հատված



Մայրցամաք

1	2	3	4	5	6	7
Հարավային Ամերիկա	Աֆրիկա	Հյուսիսային Ամերիկա	Ասիա	Ավստրալիա	Եվրոպա	Անտարկտիդա


38. (1 մ.) Նկարի վրա ցույց է տրված կեսօրի ստվերը: Բացատրեք, ո՞ր կիսագնդում է (հյուսիսայի՞ն, թե՞ հարավային) գտնվում երեխան:



39. (1 մ.) Բացատրեք, ինչու հնարավոր չէ էյր լճի մերձակայքից գիշերը, մաքուր երկնքի վրա որոշել հորիզոնի կողմերը Փոքր Արջ համաստեղության միջոցով :

40. (1 մ.) Անվանեք համաստեղությունը, որի օգնությամբ հնարավոր կլինի էյր լճի մոտ կողմնորոշվել տեղանքում:

41. (5 մ.) Վերլուծեք օդերևութաբանական դիագրամը և պատասխանեք հարցերին.



- 41.1. (2 մ.) Ո՞ր օրացուցային օրը է ք. Օսյոյում տեղումների քանակը կազմել է մոտավորապես 22 մմ և ի՞նչ տեսակի տեղումներ են նշվել քաղաքում:
- 41.2. (1 մ.) Ինչի՞ է հավասար օգոստոսի 23-ին օդի ջերմաստիճանի ամպլիտուդը: Անպայման ցույց տվեք հաշվարկի ընթացքը:
- 41.3. (2 մ.) Օգոստոսի 22-ին ք. Օսյոյում ժամը քանիսին էր նկատվում առավել ուժեղ քամի: Բացատրեք ինչպե՞ս պարզաբանեցիք այս հանգամանքը նշված օդերևութաբանական դիագրամի միջոցով:

Ակադեմիական հատուություններ

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցեք և իմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը ճիշտ է տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

Այլ մարդու կարծիքները, հուզումները, մտադրությունները հասկանալ և այս իմացությունը՝ գիտելիքը սոցիալական իրավիճակների կառավարման համար կիրառելը կոչվում է «բանականության տեսություն»: Այս ունակությունը կապված է երեխայի սոցիալական գործունեության տարբեր տեսանկյունների հետ, ինչպիսիք են կարևոր գրույց վարելը, վեճերը կարգավորելը, ընկերներին պահպանելը: Եթե գիտենք, ինչ են մտածում, ինչ են սպասում, ինչ ապրումներ ունեն մեր կողքին գտնվող մարդիկ, ավելի լավ կկարողանանք նրանց վարքը կանխագուշակել և ավելի լավ կպատասխանենք նրանց՝ համապատասխան վարքով:

Բանականության տեսության հետազոտությանը նվիրվել են բազում փորձաքննություններ: Փորձաքննություններից մեկը կարող ենք այսպես պատկերացնել. 1. Երեխային, պայմանականորեն Աննային, ցույց են տալիս շոկոլադի արկղ (որի վրա համապատասխան պիտակ է փակցված) և հարցնում են, նրա կարծիքով, ի՞նչ կարող է դրված լինել արկղում: Աննան, բնական է, պատասխանում է, որ արկղի մեջ շոկոլադ է, 2. Բացում են արկղը և ցույց են տալիս Աննային, որ այս արկղում դրված է խաղալիք շուն: Հետո Աննայի աչքի առաջ փակում են արկղը, 3. Այնուհետև սենյակ են բերում այլ երեխայի, պայմանականորեն Գիորգին և հարցնում են Աննային. «Գիորգին երբեք չի նայել այս արկղի մեջ, քո կարծիքով, ի՞նչ կմտածի Գիորգին, ի՞նչ է դրված արկղի մեջ»: Մի հետազոտության համաձայն այս հարցին ճիշտ պատասխանեց 6-ից 9 տարեկան երեխաների 86%-ը, և 4-ից 6 տարեկան երեխաների մոտավորապես 50%-ը: Այս արդյունքը բացատրվեց նրանով, որ 4 տարեկան տարիքից երեխաները սկսում են իրականության և այս իրականության մասին մարդկանց կարծիքները միմյանցից տարբերել, հասկանալ այն, որ մարդը կարող է իրականության մասին սխալ պատկերացում ունենալ:

Անցնել հարցերին. [42](#) [43](#) [44](#) [45](#) [46](#) [47](#) [48](#)

Բանականության տեսությունը նշանակալից դեր է խաղում զարգացման խախտումները կանխագուշակելու տեսակետից: Օրինակ, աուտիստական սպեկտր ունեցող երեխաների մոտ, որոնց գլխավոր հիմնախնդիրը՝ հաղորդակցություն, հարաբերություն հաստատելն է բարդություն ներկայացնում, այս ունակությունը ուշ է զարգանում կամ կարող է ընդհանրապես չզարգանալ: Աուտիստ երեխային դժվար է ընկալել այն, որ այլ մարդ կարող է իրենից տարբեր կարծիք ունենալ:

Բանականության տեսության զարգացման մեխանիզմին փորձում են բացատրություն տալ մի քանի տարբեր տեսություններով: Միմուլյացիայի (ձևացման) տեսության համաձայն, որը ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի ուսմունքի վրա է հիմնվում, երեխան նախ և առաջ սովորում է սեփական կարծիքների, հուզումների և մտադրությունների նույնականացումը, իսկ հետո իր երևակայությունը սիմուլյացնելով (ձևացնելով), ներկայացնում է՝ ուրիշի փոխարեն եթե ինքը լիներ, ինչ կմտածեր և ինչ կզգար: Այլընտրական «Տեսության տեսության» համաձայն, երեխան սեփական շրջապատը դիտարկելու և այն գնահատելու ճանապարհով զարգացնում է բանականության տեսությունը: Երեխան դիտարկում է այլ անձանց, մտածում է նրանց վարքի մոտիվների, մտածումների, հուզումների մասին և միայն դրանից հետո է սովորում սեփական բանական գործընթացները կամ հուզումները հասկանալ:

Սոցիալական ունակությունները ուսուցանելը բարդ է, բայց, եթե գիտենանք, ինչ մեխանիզմներ են դրված որպես հիմք նրանց զարգացման մեջ, կկարողանանք օգնել երեխաներին, հաղթահարելու այն սոցիալական պահանջները, որոնք առօրյան դնում է նրանց առջև:

[Անցում հարցերին.](#) [42](#) [43](#) [44](#) [45](#) [46](#) [47](#) [48](#)

42. Ստորև թվարկածներից n° ր հարցին է հնարավոր պատասխանել առաջին պարբերության համաձայն:

ա) Ինչո՞ւմ է օգնում բանականության տեսությունը:

ծ) Ե՞րբ է զարգանում բանականության տեսությունը:

ց) Ինչպե՞ս է զարգանում բանականության տեսությունը:

ղ) Ո՞ր ունակություններն են բանականության տեսության զարգացման նախապայմանները:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

43. Երկրորդ պարբերությունում նկարագրված փորձաքննության համաձայն, 6-ից 9 տարեկան երեխաների 14%-ը «Գիորգին երբեք չի նայել այս արկղի մեջ, քո կարծիքով, ի՞նչ կմտածի Գիորգին, ի՞նչ է դրված արկղի մեջ» հարցին պատասխանեցին.

Գիորգին կմտածի, որ.

ս) արկղը դատարկ է,

ծ) արկղի մեջ դրված է շոկոլադ,

ց) արկղի մեջ դրված է խաղալիք շուն,

զ) արկղի մեջ դրված է ինչպես շոկոլադ, այնպես էլ խաղալիք շուն:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

44. Երկրորդ պարբերությունում կարդում ենք. «Մի հետազոտության համաձայն, այս հարցին ճիշտ պատասխանեց 6-ից 9 տարեկան երեխաների 86%-ը և 4-ից 6 տարեկան երեխաների մոտավորապես 50%-ը»: Ստորև թվարկածներից ո՞ր եզրակացությունը կայացնելու հնարավորություն է տալիս նշված արդյունքը:

- ա) 6-ից 9 տարեկան երեխաների մեծամասնությունը դեռևս չի կարող ըմբռնել այն, որ մարդը իրականության մասին կարող է սխալ պատկերացում ունենալ,
- ծ) 4-ից 6 տարեկան տարիքի երեխաների մոտավորապես 50%-ի, իսկ 6-ից 9 տարեկան երեխաների 14%-ի մոտ հավանաբար, զարգացման խախտում է նկատվում,
- զ) 4-ից 6 տարեկան երեխաների մեծամասնությունը արդեն կարող է ըմբռնել, որ իրականությունը և այս իրականության մասին մարդու պատկերացումը կարող են միմյանցից տարբեր լինել,
- զ) 6-ից 9 տարեկան տարիքում երեխաները ավելի լավ կարող են երևույթների մասին ուրիշի պատկերացումները հասկանալ, քան 4-ից 6 տարեկան հասակում:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

45. Ստորև թվարկածներից ո՞րը կարող է կիրառվել որպես այն բանի փաստարկ, որ բանականության տեսությունը կապված է սոցիալական ունակությունների հետ:

- Տ) Այս ունակությունը երեխայի սոցիալական գործունեության տարբեր տեսանկյունների հետ է կապված, ինչպիսիք են կարևոր գրույց վարելը, վեճերը կարգավորելը, ընկերներին պահպանելը,
- Ծ) 4 տարեկան տարիքից երեխաները սկսում են իրականության և այս իրականության մասին մարդու կարծիքները միմյանցից տարբերել,
- Ճ) աուտիստական սպեկտր ունեցող երեխաների մոտ, որոնց գլխավոր հիմնախնդիրը հաղորդակցություն, սոցիալական հարաբերություն հաստատելու բարդությունն է ներկայացնում, բանականության տեսությունը ուշ է զարգանում կամ կարող է բոլորովին չզարգանալ,
- Թ) սոցիալական ունակություններ ուսուցանելը բարդ է, բայց, եթե գիտենանք ինչ մեխանիզմներ են որպես հիմք դրված նրանց զարգացման մեջ, կկարողանանք օգնել երեխաներին, հաղթահարելու այն սոցիալական պահանջները, որոնք առօրյան դնում է նրանց առջև:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

46. Երրորդ պարբերությունում կարդում ենք. «Աուտիստ երեխային դժվար է ընկալել այն, որ այլ մարդ կարող է իրենից տարբեր կարծիք ունենալ»: Ստորև թվարկածներից ո՞րն է այս կարծիքի պատկերագրումը:

- ա) Եթե աուտիստ երեխայի մոտ պատահաբար բաժակը կոտրվեց և դա միայն նրա եղբայրը տեսավ, նա հասկանում է, որ այս «հանցանքի» պատասխանատվությունը մայրիկի առջև երկուսն էլ պետք է կրեն,
- ծ) Եթե աուտիստ երեխայի մոտ պատահաբար բաժակը կոտրվեց և դա նրա եղբայրը տեսավ, նա կարծում է, որ եղբայրը դրա մասին մայրիկին անպայման կպատմի,
- ց) Եթե աուտիստ երեխան տեսավ և հետևաբար գիտի, որ իր եղբայրը բաժակը կոտրեց, բայց դա մայրիկը չի տեսել, նա կարծում է, որ մայրիկը նույնպես գիտի, ով կոտրեց բաժակը,
- զ) Եթե աուտիստ երեխան տեսավ և հետևաբար գիտի, որ իր եղբայրը բաժակը կոտրեց, բայց դա մայրիկը չի տեսել, նա գլխի է ընկնում, որ մայրիկը չգիտի, ով կոտրեց բաժակը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

47. Տեքստում ներկայացված է երկու տեսություն, որոնցով փորձում են բացատրել բանականության տեսության զարգացման մեխանիզմը: Ի՞նչ հարաբերակցություն է դրանց միջև:

- ա) Ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված սկզբունքը լրացնում է բանականության տեսության զարգացման մեխանիզմի մասին տեսության տեսության կողմից առաջարկված բացատրությանը,
- ծ) ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված է բանականության տեսության զարգացման մասին տեսության տեսության հակառակ սկզբունքը,
- ց) երկու տեսությունում էլ բանականության տեսության զարգացման մեխանիզմի մասին ներկայացված է նույնական բացատրություն,
- գ) ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված սկզբունքը հաստատում է բանականության տեսության զարգացման մասին տեսության տեսությունում ներկայացված բացատրությունը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

48. Ստորև թվարկածներից, ո՞ր հարցը չի քննարկված տեքստում:

- ս) Բանականության տեսության զարգացման հիմունքները,
- ծ) Բանականության տեսության փորձաքննական հիմնավորումը,
- ճ) Բանականության տեսության և այլ կոգնիտուրային ունակությունների կապը,
- զ) Բանականության տեսության նշանակությունը երեխայի զարգացման համար:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

49. Վերլուծական գիր

Վաժա Փշավելյան «Իմ աղերսանքը» բանաստեղծության մեջ գրում է.

«...Ուզում եմ խոտ լինել հնձելու,
Չեմ ուզում լինել գերանդի,
Ավելի լավ է ոչխար լինեմ,
Միայն թե չլինեմ գայլ»,

(Թարգմանությունը կատարված է բանաստեղծության բովանդակության համաձայն)

Իսկ Միխեիլ Զավախիշվիլիի «Ջաղոյի եկվորները» վեպի գլխավոր կերպար Թեյմուրազ Խելիսթավին ասում է.

«-Ով խղճում է իր թշնամուն, նա ինքն իր անձն է զոհում: Փափկասիրտ և բարեսիրտ մարդիկ այս կյանքում չեն դիմանում: Ես նույնպես կյանքի գրքույկում այսօրվա համար այսպիսի պատգամ գրեցի. գայլերի հետ՝ գայլություն և ոչխարների հետ՝ նույնպես գայլություն:»

Ընթռնեք տրված հատվածները և դատողություն արեք.

- Ի՞նչ բարոյական երկրնտրանք է առաջացած տրված հատվածներում:
- Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնեցնում այս ընտրությունն ուսուցիչներին ուսուցման և դաստիարակության գործընթացում:
- Ի՞նչ կարելի է նախանշել որպես այս հիմնախնդրի լուծման ուղի:

Դատողության ամրապնդման համար բերեք փաստարկներ և օրինակներ:

Ձեր կողմից գրված փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 100 բառ:

(Առավելագույն միավորը 11)